



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունվարի 2011թ. թիվ 4-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԽԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի, 57-րդ հոդվածի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի “Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին” թիվ 30 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի “դ” ենթակետով և հաշվի առնելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2010թ. մայիսի 18-ի թիվ 17 որոշումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Տալ համաձայնություն Թումանյանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից 0.0613 հա և բնակավայրերի հողերից 0.1278 հա տարածքներ Մարց գետի վրա փոքր հիդրոէլեկտրակայանի և օժանդակ կառույցների շինարարության համար ենթագետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու առաջարկությանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2011թ. հունվարի 19
ք.Վանաձոր